

Դասմառ մարդիկ յուշարար  
 Ուէ հեծութիւնք, արտասուք  
 Բաժին են լաւագոյն  
 Յաշխարհիս խաբուսիկ,  
 Ուր վայելք սուղ ընցին  
 Եւ զօսանք անցաւոր  
 Յանդարձ ի թեւս սահին սուր  
 Ալանան ի վիշ չեշտակի  
 Երեւ զալիս ընդ հեղեղատ,  
 Երեւ ամպոց գունդ հողմավար,  
 Երբ ի գըրկաց փըքին թըրոցուն,  
 Երեւ նըշուցայտ փայլական :

Հ. Գ. Ճ.

### ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Երրայեցոց բանաստեղծութիւնը : (Տ. եր. 98)

Բայց ուրիշ ամէն ձեւէ աւելի Ո .  
 Կրոց ոճոյն վեհութիւն, ազնուականութիւն ու բարձրութիւն տուող ձեր դիմանութիւնն է : Ու իցէ բանաստեղի մը գործածած դիմանութիւնները այնչափ փառաւոր չեն ու այնչափ չեն յափշտակեր՝ որչափ յաստուածուստ չնշեալ հեղինակաց գործածածները :  
 Ո՞եծ առիթներու մէջ բնութեան ամէն մասը կը կենդանացընեն, մասնաւորապէս երբոր լուսուածային երեւումն կամ ներգործութիւն մը կայ . “ Տեսին զքեզ ջուրք, լուսուած, տեսին զքեզ ջուրք և երկեան . — Ետուն անդունդք զձայնս իւրեանց . — Խոռվեցան լերինք ’ի զօրութենէ նորա . . , և այլն : Երբոր իմաստութեան տեղոյն վրայ ինդիր կ'ըլլայ, Յոթ այսպէս կ'ըսէ . ” լուսունդք ասացին թէ չէ առիս, և ծով ասաց թէ չէ ընդ ինեւ : Երրուստ և մահ ասացին . ] ուաք զփառաւորութենէ նորա . . . ( Յովլի, Գլ. Իլ. ) : Եսայեայ գրոց այն վսեմ հաստուածն ալ, որ լուսութանի թագաւորին կործանումը կը նկարագրէ, շատ առարկաներ կ'անձնաւորէ . ” Եւ փայտքն լի-

բանանու ոտնահար եղենքեզ. և մայրքն ի իբանանու ասեն՝ թէ Յօրմէ հետէ դու դադարեցեր, ոչ ելին ’ի մեզ փայտահարք : Դժոխիք ’ի ներքուստ դառնացան ’ի պատահելն քեզ. կանգնեցան միանգամայն հսկայքն ամենայն որ լեալ էին իշխանք երկրի . . : “ Լոյնպէս ստէպ կը տեսնուին մարդարեական գրոց մէջ վառվուստն ու տաք բացագանչութիւններ առ քաղաքս և առ գաւառս, առ մարդիկ և առ իրս . ” Ո՞ինչեւ յերբ կոտորեսցես, սուրդ Տեառն, մինչեւ ցերը ոչ դադարիցես . դարձիր ’ի պատեանս քո, դադարեա և վերացիր : Օ իարդ դադարիցէ . զի Տէր հրամայեաց զնա ’ի վերայ լուկաղովնի, և ’ի վերայ ծովեզերեայցն մնացելոց զարթնուլ . . ( Երեւմ . Խէ ) :

Բնդհանրապէս խօսելով, որովհետեւ շատ երկայն կ'ըլլար թէ որ ուզէինք ամէն բանի օրինակ մէջ բերել, հին կտակարանին ամենայն բանաստեղծական գրոց ոճը աշխոյժ է, սլացական, և կենդանի քան ուրիշ ամէն բանաստեղծներունք : Բայլորովին կը տարբերի այն կանոնաւոր և կոկ բացատրութենէն, որուն վարժեցուցած են ականջնիս նոր բանաստեղծութիւնները . որովհետեւ ներքին շնչման թափն է : Տեսարանները ցուրտ կերպով ստորագրուած չեն, ընդ հակառակն անանկ

նկարագրուած՝ որ իբրև թէ մեր աշացն առջև ըլլային։ Իմէն առարկայի, ամէն անձի հետ կարելի է խօսիլ, իբրև թէ ներկայ ըլլային։ Հանկարծական անցքեր շատ կան. կապակցութիւնը շատ տեղ մութ է. անձինքները ստեակ կը փոխուին. խել մը ձեւեր մէկ տեղ դրուած են ու ետեւէ ետեւ իրարու կը յաջորդեն։ Ալացական վսեմութիւնն մըն է իր որոշիչ յատկութիւնը, և ոչ թէ կոկ վայելութիւն մը։ Ալ տեսնանք որ գրողին միտքը ինքիրմէ վեր բարձրացած ըլլալով՝ ամէն ջանք՝ ի գործ կը դնէ այնպիսի գաղափարներ արտադրելու, զորոնք բացատրելը շատ դժուարին է։

Հետ այս ընդհանուր դիտողութիւններն ընելու լ. Կրոց բանաստեղծութեանը վրայօք, համառօտիւ մը խօսիմ հիմա անոնց մէջ գտնուած բանաստեղծութեան այլ և այլ տեսակներուն վրայ, և լմբնցընեմ քննութիւնս զլիսաւոր հեղինակաց որոշիչ յատկութիւնները հարևանցի մը նշանակելով։

Կրամաւորապէս չորս ազգ բանաստեղծութեան կը գտնուի ՚ի լ. Կիրս, վարդապէտական, հովուական, եղերերգական, և քնարերգական։ Արդապէտական բանաստեղծութեան ամենէն աւելի նշանաւոր օրինակն է Իռուակաց գիրքը, որուն առաջին ինը գրլուխները լի են գերազանց բանաստեղծութեամբ, և զարդարուած բազում ձեւերով ու բացատրութեան ֆափկութեամբ։ Տասներորդ զլիսէն սկսած՝ ոճը զգալի կերպով կը փոփոխի, և աւելի խօնարհ աստիճանի մը կ՚իջնայ, որ մինչեւ վերջը կը տեւէ, և սակայն պահելով միշտ այն վճռական, զօրաւոր և կտրուկ կերպը, և այն պարբերութեանց ձարտար կազմութիւնը, որ բոլոր երայական բանաստեղծութեց կատարելութիւնն է։ Ի՞սպակէս է յոզովողի գիրքն ալ, ինչունք քանի միանալու մէջ ալ, ուրիշ տեսակ երբայական բանաստեղծութեանց տողերէն աւելի երկայն են, և ներդաշնակութիւնը աւելի սահօւն է, և եղերերգութեան ողբական հնչմանը շատ յարմար։

Դիպին լ. Կրոց մէջ, ինչպէս Պատմի ողբը իր Յովնաթան բարեկամին վրայ, մարգարէական զրոց մէջէն շատ կտորներ, և խել մ' ալ դժբաղդութեան ու ցաւոց առթով շինուած սաղմոսներ : ԽԱ սաղմոսը մամնաւորապէս գերագոյն աստիճանի ֆափուկ և ողբական է : Այսպիս ամենէն աւելի կանոնաւոր և կատարեալ եղերերգական քերթուած լ. Կրոց, և թերեւս ամենայն բանաստեղծական երկասիրութեանց մէջ, Երեմիայի Ողբոց գիրքն է : Որովհետև մարգարէն այս գրոց մէջ տաճարին և սուրբ քաղաքին կործանմանը, և բոլոր պետութեան աւերմանը վրայ կ'ողբայ, անոր համար կը հիւսէ ՚ի նա այն ամէն սրտաշարժ իմաստները, զորոնք կրնայ թելագրել այսպիսի տիտուր նիւթ մը : Քերթուածոյն կազմութիւնը մեծապէս հանճարեղ է . փոփոխակի մարգարէն և Երուսաղէմ քաղաքը իրենց ցաւերուն վրայ կը խօսին . և ՚ի վերջոյ ժողովը գետանցութեան գասը եւանդագին և ցաւալից աղերսանքով մը կը պազատի առ Իազարեան : Ինագիին տողերը, ինչպէս օր մասամբ կ'երեւայ բաւուական թարգմանութեան մէջ ալ, ուրիշ տեսակ երբայական բանաստեղծութեանց տողերէն աւելի երկայն են, և ներդաշնակութիւնը աւելի սահօւն է, և եղերերգութեան ողբական հնչմանը շատ յարմար :

Սողոմոնի Երգ երգոցը ընտիր օրինակ մըն է հովուական բանաստեղծութեան : Տարակօյս չկայ որ անոր մուաւորական իմաստը խորհրդագական այլաբանութիւնն մըն է . բայց արտաքին ձեւ հովուական թատրերգութիւն մըն է, կամ թէ ըսենք շարունակեալ խօսակցութիւն մը հովուական կենցաղունեցող անձանց մէջ, և միանգամայն զեղուն է սկզբանէ մինչեւ վերջը հովուական և գեղջկական իմաստներով :

Հին կտակարանը Ճոխ է նաև քնարերգական քերթութեամբ, կամ թէ ըսենք այն բանաստեղծութեամբ՝ որուն կը միաձայնի երաժշտութիւնը :

Եղերերգական քերթութեան խել մը ամենագեղեցիկ օրինակներ կը հան-

Բաց ’ի այն բազմաթիւ երգերէն ու օրհնութիւններէն, որոնք ցրուած են պատմական և մարգարէական գրոց մէջ, ինչպէս Առվանդի, ‘Դեբորայի և խել մը ուրիշ անոնց նման օրհնութիւնները, բոլոր Արձմուաց գիրքը սրբազն տաղերու հաւաքում մը սեպելու է, որոնք շատ զանազանութիւն ունին իրենց կազմութեանը մէջ, և ընտիր քնարերգական բանաստեղծութեամբ պՃնեալ են. երգեմն վառվրուն, ցընծալից, յաղթական ձայնիւ կ’երգեն, երգեմն ծանր և վեհ, և երգեմն ալ փափուկ և անոյշ: Այս ապացոյցներէն յայտնի կ’ըլլայ՝ որ Ա. Գրոց մէջ առատ օրինակներ կը գտնուին բանաստեղծութեան գլխաւոր տեսակներուն շատին:

Արբազան գրոց հեղինակներուն մէջ ոճոյ և գրութեան զգալի զանազանութիւն մը կը նշմարուի, և իւրաքանչիւրին որոշիչ յատկութիւնները նշանակելն այս օգուտը կ’ունենայ՝ որ աւելի օգտիւ կը կարգացուին անոնց գրուածքները: Արբազան բանաստեղծից մէջ ամենէն աւելի գերազանցներն են Հոբայ գրոց հեղինակը, ‘Դաւիթ, և Հայի: Արովչետե Դաւթի քերթութիւնները քնարերգական են, անոր համար անոնց մէջ աւելի զանազանութիւն գրութեան և ոճոյ կայ, քան թէ միւս երկուքին մէջ: Դաւթի գլխաւոր ձիրքն է քաղցր, փափուկ և ախորժելի գրութիւնը. իր սազմուներուն մէջ կը գլունուին նաև զօրաւոր և վսեմ կտորներ, բայց ազդու նկարագրութեան կողմանէ ստորին է քան զ՞ոթ, և վսեմութեան մէջ քան զլայի: Ասլորաբար ինքը տեսակ մը չափաւոր վեհութեան աստիճանն ունի, և եթէ առթով մը անկէց վեր բարձրանայ, յանկարծնորէն անոր կը դառնայ: Այն սազմուներն աւելի սրտաշարժ են՝ որոնց մէջ արգարոց երջանկութիւնը, կամ Աստուծոյ բարութիւնը կը ստորագրէ, անոնք՝ որոնց մէջ աստուածակը հօգույ մը փափուկ զգացմունքները կը բացատրէ, կամ եռանդնալից ու սիրալիր պա-

զատանքներ կը մատուցանէ առ Աստուած: Հայի առանց բացառութեավեմ է քան զամենայն բանաստեղծս, որն որ ժարգմանութեանց մէջ ալ բաւականապէս դուրս կը ցատքէ. վեհութիւնն է իր հանձարոյն նշանաւոր կնիքը, այն աստիճանի զօրաւոր և միակերպ վեհութիւն մը՝ սրչափ որ հին կտակարանին ուրիշ բանաստեղծներուն մէջ չգտնուիր: Ովկի իմաստներուն և թէ անոնց բացատրութեր մէջ այնպիսի ազնուական մեծութիւն մը ունի, որուն նմանը չկայ, և միայն իրեն սեփական է: Դարձեալ իր գրոց մէջ աւելի պարզութիւն և կարգ և աւելի կանոնաւոր կազմութիւն կայ՝ քան ուրիշ ամէն մարգարէական գրոց մէջ:

Երեմիայի հանձարը բոլորովին տարբեր տեսակ է. քիչ անգամ վսեմութեն կը հասնի, և միշտ փափուկ ու եղերերգական է: Հզեկիել բանաստեղծական չնորհաց և վայելըութեան կողմանէ շատ ստորին է քան զլայի և քան զլարեմիա. բայց նշանաւոր է կարգէ դուրս ուժով և կրակով մը: Իստ լուսահի վայելըու և աղուոր բացատրութեանը՝ Հզեկիել “ Ինուն է, ազգու, և ողբերգակ. զգացմանց մէջ եռանդնալից է, անողոք. իմաստները բեղնաւոր, և ահաւոր. ոճը փառաւոր, ծանր, և երբեմն քիչ մը խիստ. կրկնութիւնները շատ են՝ իր խօսքերուն ոյժ տալու համար: Ինչ բանի վրայ որ կը սկսի խօսիլ, ամենայն խնամօք անոր վրայ հաստատ կը կենայ, և քիչ անգամնիւթէն դուրս կ’ելլայ: Ուրիշ բաներու մէջ թերեւս շատ բանաստեղծներ զինքը գերազանցած են. բայց այն տեսակին մէջ, որուն համար մասնաւորապէս բընութիւնն ստեղծեր է զինքը, այն ինքն է ոյժ, ծանրութիւն, թափ, և շքեղութիւն, ոչ ոք յաղթած է իրեն,,,: Լոյն գիտունը Հային Հոմերոսի կը նմանցընէ, զլարեմիա Վիմոնիդեսի, և զլազեկիել Հաքիլոսի: Հայելայ գրոց մեծ մասը բանաստեղծական է. իսկ Երեմիայի և Հզեկիելի գրոց կէսը միայն: Փոքր մարգարէից մէջ բանա-

ստեղծական աշխուժի կողմանէ աւելի նշանաւորներն են Ավսէէ, Հովհաննէ, Ահքիս, Ամբակում, և մանաւանդ՝ Կառում: Դանիելի և Հովհանու մարգարէութեանց մէջ բանաստեղծութիւն չկայ:

Աւ մնայ հիմա միայն Հոբայ գրոց վրայ խօսիլ, որով խօսքս պիտի լմբնցը նեմ: Հայտնի է ամենուն որ այս գիրքը շատ հին է, և ընդհանրապէս քան զամէն բանաստեղծական գիրս հնագոյն կը համարուի. բայց հեղինակը անծանօթ է: Դիտելու արժանի բան է՝ որ այս գիրքը կապակցութիւն մը չունի Եբրայեցոց գործողութեանց և սովորութեանցն հետ: Տեսարանն է Աւոտիդ, կամ Եգուլմական երկրին մէջ, որ Երաբիոյ մասն է. և մէջի գործածուած գաղափարները սովորաբար տարբեր են այն գաղափարներէն՝ զորոնք ցուցուցինք թէ հասարակ են Եբրայեցի բանաստեղծից: Արբազան պատմութեանծանեթ մեծամեծ զիպուածներուն, Հրեցից կրօնական արարողութիւններուն, Լիբանանու, կամ Լարմելոսի, կամ Հրեաստանի կիմային ուրիշ մասնաւոր, յատկութիւններուն ակնարկութիւն մը չըկայ ՚ի նմա: Դետերու կամ հեղեղներու նմանութիւններ քիչ կը գտնուին, որ ընտանի առարկաներ չեն Երաբիոյ մէջ: Ամենէն աւելի երկայն նմանութիւնն որ կը տեսնուի այս գրոց մէջ՝ այնպիսի առարկայէ մը առնուած է, որ այն երկրին մէջ շատ ծանուցեալ է, այսինքն առուակէ մը՝ որ տաք եղանակին կը ցամքի, և ՚ի գերեւ կը հանէ ձանապարհորդին ակնկալութիւնը:

Այսկայն Հոբայ գրոց բանաստեղծութիւնը ոչ միայն հաւասար է ո և իցէ ուրիշ հեղինակաց բանաստեղծութեանը, այլ նաև գերազանց քան զամենեսին, ՚ի բաց առեալ զլասայի միայն: Աւ ինչպէս որ այս յետինս ամենէն աւելի վսեմէ, Դաւիթ ալ քան զամէնն աւելի անոյշ ու փափուկ, ասանկ Հոբալ ամենէն վեր է նկարագրական և երեակայական մասին մէջ: Աչ ոք իրմէն աւելի երեակայութեան կրակ ունի, ոչ

ոք իրմէն աւելի փոխաբերութքք հարուստ է, և կրնայ ըսուիլ իրեն համար որ ոչ թէ կը նկարագրէ, հապա տեսանելի կ'ընէ այն ամենայն բան՝ որուն վը բայ կը խօսի: Այս բանիս շատ օրինակ կրնայ բերուիլ. բայց բաւական ըլլայ միայն քննել այն զօրաւոր և կենդանի գոյներն, որոնցմավ հետեւեալ կտորին մէջ, որ իր գրոց ԺԷ և ՚ գլուխներէն առնուած է, չարաց վիճակը կը ստորագրէ մեզի: Ուշադրութիւն ընելու է որ ինչպիսի արագութեամբ զիրար կը փոխանակեն իր գաղափարները, և միանգամայն որչափ խորին տպաւորութիւն կ'ընեն մեր երեակայութեան վրայ. “ Ոյս նորա (ամսկարշտին) խաւար՝ ՚ի յարկի իւրում, և ձրագ՝ ՚ի վերայ նորա շինցի: Որսասցեն յետինք զինչս նորա: Միալեալ են խորհուրդք նորա: Ինկցի ոտն նորա յորոգայթ, և շաղեսցի՝ ՚ի թակարդի: Եկեսցեն՝ ՚ի վերայ նորա որոգայթք: զօրասցուսցէ՝ ՚ի վերայ նորա զծարաւիս: Օի թաքուցեալ են յերկրի տուռունք նորա, և կալանք նորա շուրջանակի՝ ՚ի վերայ շաւզաց նորա: Վատակեսցեն զնա ցաւք շուրջանակի: բազումք զոտիւք նորա պատեսցին՝ ՚ի նեղութեան սովոյ: Պատրաստեալ է նմա կործանումն ահագին. կերիցին կնիք ոտից նորա: Լերիցէ մահարաժամ զգեղեցկութիւն նորա: վարեսցի բժշկութիւն՝ ՚ի յարկաց նորա: Հասցէ նմա տագնապաւ պատուհաս արքունի: Եւ բնակեսցէ իբրև՝ ՚ի գիշերի՝ ՚ի յարկի իւրում: ցրուեսցին վայելութիւնք նորա ծծմբով: Աներքուստ արմատք նորա ցամաքեսցի, և ՚ի վերուստ անկցին հունձք նորա: Հիշատակ նորա կորիցէ յերկրէ, և ոչ գտցի անուն նորա առ երեսօք արտաքնովք: Աերժեսցեն զնա՝ ՚ի լուսոյ՝ ՚ի խաւար: և մի եղիցի նմա ծանօթ՝ ՚ի ժողովը գեան իւրում: Անլիցի ապրեալ՝ ՚ի ներքոյ երկնից տուն նորա: այլ՝ ՚ի նորայն կացցեն օտարք: Հեծեծեսցեն՝ ՚ի վերայ նորա յետինք: զառաջինս կալան զարմանք: — Աիթէ զայդյայսմհետէ գիտացեր: այլ յորմէ հետէ եղաւ մարդ

՚ի վերայ երկրի . Ո՞ի ուրախութիւն ամնարշտաց բեկումն անչնարին , և խնդութիւն անօրինաց կորուստ : Եթէ ելանիցեն յերկինս սպատարագք նորա , և զոհք նորայամկո մերձեսցին : Յորժամհամարեսցի թէ հաստատեալիցէ , յայնժամ՝ ի սպառ կորիցէ . և որ գիտէին զնա՝ ասասցեն թէ ուրէ : Իբրև զերազ թուեցեալ ոչ գտցի , թռեաւ իբրև զտեսիլ գիշերական : Այն որ հայեցաւ ՚ի նա՝ ոչ յաւեցէ , և ոչ ծանիցէ զնա տեղի իւր : Ո՞րդիս նորա սատակեսցեն վատթարք . ձեռք նորա բորբոքեսցին ցաւովք : Ոսկերք նորա յագեսցին մանկութեամբ նորա , և ընդնմին ՚ի հող ննջեսցեն : Եթէ քաղցրասցի ՚ի բերան նորա չարութիւն , թաքուսցէ զայն ՚ի ներքոյ լեզուի իւրոյ : Խնայեսցէ ՚ի նա , և մի թողցէ զնա , և ժողովեսցէ զնա ՚ի մէջ կոկորդի իւրոյ : Եւ մի կարասցէ օգնել անձին իւրում . լեղի իժի ՚ի փորի իւրում : Ո՞եծութիւն անիրաւութեամբ ժողովեալ փսխեսցի . ՚ի տանէ նորա կորզեսցէ զնա հրեշտակ : Ո՞սրտմութիւն վիշապաց ծծեսցէ . սպանցէ զնա լեզու օձի : Ո՞ի տեսցէ զկիթ արօտականաց , և մի զարօտա մեղու և զկոգւոյ : Ի զուր և ՚ի տարապարտուց վաստակեցաւ ՚ի մեծութիւն՝ ուստի ոչ ձաշակեսցէ , իբրև ըզխիստ ինչ , զանձամկ զանկոտոր : Ո՞ի զբազում տկարաց տունս խորտակեաց , և զյարկս յափշտակեաց և ոչ հաստատեաց : Ո՞իք փրկութիւն ստացուածոց նորա , ՚ի ցանկութեան իւրում ոչ ապրեսցի . և մի լիցին մթերք կերակրոց նորա : Ո ասն այնորիկ մի ծաղկեսցեն բարունակք նորա . յորժամհամարեսցի թէ ահա լցեալ իցէ՝ նեղեսցի : Ամենայն տագնապ հասցէ ՚ի վերայ նորա , թէ զիանրդ լնուցու որովայն նորա : Այսպեսցէ ՚ի վերայ նորա զարտմութիւն բարկութեան , արկցէ զնովաւցաւ . և մի ապրեսցի ՚ի ձեռանէ երկաթոյ : Կոցուտեսցէ զնա աղեղն պղընձի , անցցէ ընդ մարմինս նորա նետ : Այստեղք շրջեսցին ՚ի յարկս նորա , արհաւիրք ՚ի վերայ նորա : Ամենայն խա-

ւար նմա մնասցէ , կերիցէ զնա հուրանշէջ : Զարչարեսցէ եկամուտ զտուն նորա . յայտնեսցեն երկինք զանօրէնութիւն նորա , յարիցէ ՚ի վերայ նորա երկր : Քակտեսցէ կորուստ զտուն նորա ՚ի սպառ , հասցէ ՚ի վերայ նորա օրբարկութեան :

ՊԼԵՐ

## ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

## Մազդադինէ :

( Ըարունակութիւն . Տես Երես 139)

9

Ո՞աւրիտիոս ինչպէս որ իմացուցերէ էր Ո՞ագդաղինէի՝ մեծ ձամբորդութիւն մը սկսելու վրայ էր . իրաւցընէ խիստ մեծ , որովհետեւ ովլ որ ալ այս ձամբորդութիւնն ըրած է՝ ինչուան հիմա դարձած չէ , և որովհետեւ ձամբայ ելլալու միջոց ամենէն աւելի աներկիւզերն ալ արիւն քրտնած են ու բռը մարմիննին դողացած է սարսափէն : Իր ամէն պատրաստութիւնները տեսած էր . ալ ուրիշ բան չունէր ընելու բայց եթէ վերջին բարեւ մը տալ այս աշխարհիս ու ուրիշ աշխարհ մը անցնիլ , զոր անմտաբար կը յուսար լաւագոյն գտնալու : Ո՞աւրիտիոս իբրև անզգալի զառ ՚ի վայրէ մը վար իջնալով հասերէ էր այս աստիճանին : Ո՞արդկային կենցաղավարութեան այս ընթացքը անանկ ծանօթ ու սովորական է ամենուն , և այնչափ նկարագրուած է աւելի ձարտասան գրիններէ , որ բաւական է հոս գլխաւոր կէտերը միայն ստորագրել :

՚այէ սա երիտասարդին . հազիւթէ քսան տարեկան կայ . ահաւասիկ կը սկսի իր կեանքը , որովհետեւ ինչուան հիմա իրեն համար կեանքը իր բնակութեան միայնարանին մէջ երազած գեղեցիկ աշխարհն էր : Իր տղայութեան տարիները հայրենական յարկին